ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N 036/46
«15» 04 2011թ.

գ. Արգավանդ
e-mail: argavandhamaynk@rambler.ru

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐՆ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ

Տեղեկացնում ենք, որ ՀՀ Արարատի մարզի Արգավանդ համայնքում 2010թ. ապրիլի 15-ին տեղի է ունեցել հասարակական լսումներ, որին մասնակցում էին գյուղապետարանի աշխատակիցներ , ավագանու անդամներ, դպրոցի տնօրենը, գյուղի բնակիչներ, ԱԱՊԿ-ի աշխատակիցներ և Արարատի մարզի Տարածքային կառավարման վարչության պետի տեղակալ Ալինա Լալայանը:

Ներկայացվել է հաշվետվություն 2011թ. 1-ին եռամսյակի ընթացքում համայնքում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Գյուղապետը նշեց, որ նորակառույց մանկապարտեզի շենքում ավարտված են էլեկտրասնուցման և գազաֆիկացման աշխատանքները, իսկ ներկայումս մանկապարտեզի ջեռուցման աշխատանքները ընթացքի մեջ են, որից հետո մանկապարտեզի շահագործման նպատակով պետք է իրականացվեն գույքի և սարքավորումների ձեռքբերման աշխատանքները:

Գյուղապետը նշեց նաև գյուղապետարանի նոր շենքի կառուցման համար ընթանում են նախագծային աշխատանքներ :

Հայրենական մեծ պատերազմի հուշակոթողի կողքին տեղադրվելու է խաչքար՝ նվիրված արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին,և այդ աշխատանքները ընթացքի մեջ են և կավարտվեն մինչև մայիսի 9-ը:

Համայնքի ղեկավար՝ Ս. Նարիբեկյան